



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

«26» «հունիսի» 2019թ. № 255-ՂԻ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն նախարարության կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչության պետ Արթուր Պետրոսյանի, կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչության կենսաբազմազանության և կենսասանվտանգության քաղաքականության բաժնի պետ Ոսկեհատ Գրիգորյանի կողմից էթիկայի կանոնների (վարքագծի կանոնների) խախտման դեպքով:
 Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝
 1) Արթուր Պետրոսյանի և Ոսկեհատ Գրիգորյանի կողմից էթիկայի կանոնների (վարքագծի կանոնների) խախտումը քննելը:
2. Ծառայողական քննություն վարող՝ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով:
3. Նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպչին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ձևավորել էթիկայի հանձնաժողով:
4. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:
5. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:
6. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
 «26» հունիսի 2019թ.
 ք. Երևան

Վ.ԶԻԼԱՎՅԱՆ